ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 218
31 հուլիսի 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 3 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2017 թվականի N 76

## ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 38-Ն որոշմամբ *որոշում եմ.*

2017թվականին պարտադիր զինվորական ծառայության մեկնած զինակոչիկներին նվերներ գնելու համար սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. հուլիսի 24
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հուլիսի 2017 թվականի N 77

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ, համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 35-Ն որոշմամբ և հաշվի առնելով Կարեն Տիգրանի Տոնականյանի դիմումը *որոշում եմ.*

1. Բավարարել Կարեն Տիգրանի Տոնականյանի դիմումը՝ տալ շինարարության թույլտվություն բնակելի կառուցապատման տնամերձ հողի վրա բնակելի տան, ավտոտնակի և պարիսպի կառուցման համար:

2.Կառուցապատողին՝

1)շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, համաձայն N 2-5 ձևի ծանուցել համայնքի ղեկավարին,

2) մուծել սահմանված տեղական տուրքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. հուլիսի 27
գ.Մրգաշեն

## ՀԱՅԱՍՏԱ ՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հուլիսի 2017 թվականի N 78

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Մրգաշեն համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 35-Ն որոշման պահանջներով *որոշում եմ.*

1. Անհատ ձեռնարկատեր Լիլթ Հակոբյանին տալ թույլտվություն 6-րդ փողոց տ. 42 հասցեում գործող մանրածախ առևտրի խանութում 2017 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.
1) Ոգելից խմիչքների արտադրանքի մանրածախ վաճառք
2) Ծխախոտի արտադրանքի մանրածախ վաճառք
2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Նարգիզ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. հուլիսի 27
գ.Մրգաշեն